EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիրելի հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Վաշինգտոնի Սուրբ Խաչ Հայ Առաքելական եկեղեցու հիմնադրման եւ օծման 50-ամյակի կապակցությամբ: Հիմնադրման առաջին իսկ օրվանից, կրոնական հաստատություն լինելուց զատ, Սուրբ Խաչ եկեղեցին Վաշինգտոնի հայկական համայնքի համար ծառայել է նաև որպես մշակութային, ուսումնական ու դաստիարակչական կենտրոն: Այն այսօր Ամերիկայի արևելյան ափի հայապահպանության կարևոր կենրոններից է և իր ամենօրյա լուման է ներդնում համահայկական խնդիրների լուծման գործում:

Հիրավի բացառիկ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում: Այն մշտապես եղել է հայ ժողովրդի ընկերային ու մշակութային կյանքի առաջնագծում՝ ստանձնելով հայ մարդուն հոգեպես առաջնորդելու և կրթելու բարձր առաքելությունը: Վաշինգտոնի Սուրբ Խաչ Հայ Առաքելական եկեղեցին ազգային հոգևոր լավագույն ավանդույթների շարունակողն է:

Օգտվելով այս պատեհ առիթից՝ ցանկանում եմ նշել, որ հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարումն այսօր, առավել քան երբևէ, միասնականություն է պահանջում: Ուստի ազգային խնդիրների լուծման հարցում ջանքերի համադրումը կարևոր հրամայական է դարձել, եւ եկեղեցու շուրջ համախմբված վաշինգտոնյան հայ համայնքն առաջնորդվում է այս գաղափարի իրականացման ընկալումով:

Եվս մեկ անգամ ցանկանում եմ իմ ջերմ բարեմաղթանքներն ուղղել այս տարեդարձի կապակցությամբ և Սուրբ Խաչի սպասավորներին ու հավատացյալներին ցանկանալ խաղաղություն և ամենայն բարօրություն:

Տիգրան Սարգսյան
Դեսպան